

Խօսքը կատարեալ չէ երբ որեւէ զգացումով չէ ջերմացած: Միշտ ծածուկ խանդ մը պէտք է ընկերանայ խօսքին:

Ահաւասիկ պաշտօնները գորս պիտի կատարեն մարմինը, ձայնը ու շնչոտները: Զայնը պէտք է դառնայ տաք, շնչոտ կենդանի, խօսքը պատկերաւոր: Ահաւասիկ ինչ որ կը սպասուի խօսքէն: Երբ Տեմոսթենէսի հարցուեցաւ գաղտնիքը իր խօսքին հրապոյրին, պատասխանեց. — "Գործողութիւն, գործողութիւն, գործողութիւն (Action): Այսու հանդերձ "գործողութեան" ետեւ միշտ պէտք է գտնուի ծնող հոգին գտնուի: Հոգիէն մեկնածը միայն կարող է հոգիներու թափանցել: Հոս է հրապարակախօսութեան գաղտնիքը, որ երեք պայմաններ կ'ենթադրէ. —

ա. Խօսողը պէտք է համեստ ըլլայ. իր խօսքին մէջ պէտք է մոռնայ ինքզինքը: Այն որ գովեստի համար քեմ կը քարձրանայ, չի կրնար նշմարիտ հրապարակախօս մը

ըլլալ: Պէտք է գիտնայ որ քեմին վրայ կարեւորը խօսողը չէ, այլ ըսելիքը:

բ. Խօսողը անկեղծութիւն պէտք է ունենայ: Իր խօսքը ինք պէտք է ըլլայ. սուտ խօսք, որուն ետեւ անձը չիկայ, ձայն միայն կը մնայ: Բնականութեան գաղտնիքը անկեղծութիւնն է:

գ. Ի վերջոյ այս բոլորին գաղտնիքը սէրն է: Այն որ չի սիրեր իր ըսելիքը, հոգիով չէ կապուած անոր, չի կրնար իր նիւթին վերաբերմամբ սէր արծարծել ունկնդիրներուն մէջ: Եթէ սէր չունի այն նշմարտութեան հանդէպ, որուն համար քեմ ելած է, եւ չի սիրեր գտնուի՝ որոնց համար կը խօսի, աւելի լաւ կ'ընէ նկարավաճառի խանութ մը բանայ քեմ քեմ:

28 Հոկտ. 1939

ՇԱՀԱՆ Ռ. ՊԵՂՊԵՐՆԱՆ

ԽՈՐՀՐԳԱԲԱՆԱԿԱՆ ԹՈՒՍԱԲԱՆՈՒԹԻՒՆ

Աստուած, կամ Աստուծոյ էութիւնը սկզբունքօրէն անհաճախելի ու անհասանելի է: Նրա հետ հաղորդակցումն կատարուի է աստուածային նշմարտութիւններ արտացոլող խորհուրդների եւ խորհրդանշանների միջոցով: Սա հայ առաքելական եկեղեցու որդեգրած ժխտողական (ափօփաթիք) աստուածաբանական դրոյթն է, որն ընկած է խորհրդաբանական դատողութիւնների հիմքում:

Խօսելով թուերի խորհրդաբանութեան մասին նախ նշենք, որ ըստ հեթանոս շրջանի փիլիսոփաների, թուերի ետեւում պահուած են գերագոյն աստուածային խորհուրդներ եւ թիւը նիւթական գոյերի բաղկացուցիչն է: Թիւը աշխարհի գոյացման ատաղձն է: Պիւթագորականները համարում

էին, որ թիւը ընկած է "համաշխարհային ներդաշնակութեան եւ յաւերժական շրջապտոյտի հիմքում, այն իմաստութեան ու ազատ գիտութեան առարկայ է, նաեւ իրերի էութիւնը" եւ որ "Աստուած անհանելի թիւ է": Պիւթագորասի այս միտքը իւր հետնորդներին տանում էր դէպի թուերը, որպէս զի դրանցով կարողանային հաղորդել անհանելի կերպարները: Սկզբնական շրջանում պիւթագորականները "աստուածացնում" էին թուերը, դրանք անուանելով անբաժանելի "սուրբ" մոնադաներ, գոյերի սկզբնապատճառներ, այսուհանդերձ թիւը նրանց համար տարածական մեծութիւն էր՝ կապուած զգայական մարմինների ու առարկայական աշխարհի հետ: Ժամանակի ընթացքին նրանք անեց-

նելով իրենց տեսութիւնը, խորհրդակցականացնելով թիւը, այն նկատեցին իբրեւ ինքնուրոյն մետաֆիզիկական(*) էութիւն: Այսպէս օրինակ մէկ(1) թիւը՝ "սուրբ" մոնադը պիւթագորականների մօտ համարում էր առաջնամիակ եւ մայր "աստուածների" . . . Տասը(10) թիւը՝ "սուրբ" տասնեակն է, տիեզերքի կերպարը ու թուերի խորհրդապաշտութեան հիմքը:

Թիւը խորհրդաբանական մեծ նշանակութիւն է ստանում Պլատոնի աշխատութիւններում: Նա գտնում է, որ թուերը նշաններ են, որոնք ստորին առարկաները հաղորդակցում են գերագոյն էութեանը: Պլատոնը թիւը անջատում է զգայական, շօշափելի աշխարհից, դարձնում է աշխարհը մարմնաւորող, կազմաւորող գաղափար, նաեւ տիեզերքի կարգաւորիչ: Համաձայն Պլատոնի, թուերի հայեցողութիւնը "ուժգնօրէն մղում է հոգին դէպի վեր եւ ստիպում է խորհել ինքնին թուերի մասին . . . թոյլ չտալով, որ որեւէ մէկը փոխարինի նրանց տեսանելի եւ շօշափելի թուակիր մարմիններով" (Պլատոն, "Պետութիւն" VIII, 525 a-d). հիմնականում այս տեսութիւնների վրայ էր կառուցում իր քննարկով միատիկական միջնադարեան թուաբանութիւնը: Թուաբանութիւնը համարում էր մաթեմատիկայի մի տեսակ, ինչպէս յիշատակում է Դաւիթ Անյաղթը, թէ "Արդ քանակից առաջացող մաթեմատիկան . . . ընդգրկում է՝ թուաբանութիւնը, երաժշտութիւնը, երկրաչափութիւնը, աստղաբաշխութիւնը", (Դաւիթ Անյաղթ, "Երկեր" Երեւան 1980, էջ 109, բարգմանութիւնը Ս. Ս. Արեւշատեանի):

Ըստ Անյաղթի, մաթեմատիկան իր հերթին տեսական փիլիսոփայութեան երեք ստորաբաժանումներից մէկն է (քննադիտութիւն, մաթեմատիկայ, աստուածաբանութիւն): Տեսական փիլիսոփայութիւնը նման ձեւով է բաժանում եւ

Արիստոտելը, մաթեմատիկան որպէս գիտութիւն մաս համարելով փիլիսոփայութեան: Սրանք առանձին բնութեան նիւթեր են: Ինչեւիցէ նկատելի է, որ թուաբանութիւնը ծառայում էր աստուածային նշմարտութիւնների խորհրդաբանական մեկնութեանը, մասնաւորապէս միջնադարում՝ Քրիստոնեայ հեղինակների գործերում, ինչպէս գտնում ենք Դաւիթ Անյաղթի մօտ: "Հետեւաբար թուաբանութեան լեզուն ինքնուրոյն չէր. նա քրիստոնէական մշակոյթի համընդհանուր լեզուի մի "բարբառն էր", (Հ. Հ. Քեօսեան "Խորհրդանշանը Եղիշէի մեկնաբանական եւ նաոագրական երկերում", Էջմիածին 1989, համար "Ը"):

Օգտուելով որոշ հեղինակների աշխատութիւններից ներկայացնեմք մի քանի թուերի խորհրդաբանական մեկնութիւնների օրինակներ:

Հին եւ Նոր Կտակարանների, հայրաբանական գրականութեան, հեթանոս փիլիսոփաների, եկեղեցական հայրերի վկայութիւններով միահիստեած թուային խորհրդաբանութիւնը նուիրում երկերից է Անանիա Վարդապետ Նարեկացու անունով յայտնի "Սակա բացայայտութեան թուոց" ձեռագիր աշխատութիւնը: Տեսական մասում, որ յաջորդում է նախադրութեանը, հեղինակը նկատում է, որ թուերի եւ նրանց յարաբերութիւնների միջոցով նաեւաչում է "Երեւելի" աշխարհը, որն անբեւոյթի հայելին է: Հանաչելով աշխարհը մենք թափանցում ենք աստուածային ոլորտներ: Անանիա Նարեկացին իր միտքը զարգացնում է հետեւելով պիւթագորականների, Պլատոնի, Դաւիթ Անյաղթի, Փիլոն Ալեքսանդրացու տեսութիւններին: Մենք յաճախ կը վկայակոչենք այս աշխատութիւնը: Այժմ անցնեմք առանձին թուերի բնութեանը:

Բոլոր թուերից առաւել շատ խորհրդաբանական մեկնութիւնների է

(*) Մետաֆիզիկական - քննազանցական

ենթարկուել եօթ (7) թիւը: Այսպէս Եղիշէն "Յետուայ եւ Դատաւորաց" մեկնութեան մէջ պատմելով Սամսոնի եօթնագիսակի մասին այն նմանեցնում է արարչագործման եւթներորդ օրուան. "Թիւ եօթնակին . . . զի մի է գորութիւնն աստուած աշինգրոց. վեց ի նոցանէ զվեցօրեայ արա-րածքս նշանակէ՝ որ ի սկզբանէ, իսկ եօթներորդն՝ սուրբ, փափուկ նուիրեալ Աստուծոյ օր, որ եւ անաշխատելի գորութեան հանգիստ անուանեցաւ" (Մատենագրութիւնք նախնեաց՝ Եղիշէ, ի Վեներտիկ ի տպարանի Ս. Ղազարու 1859, էջ 190-191): Իսկ Արարածոց մեկնութեան մէջ կարդում ենք. "Ջապակնացուն արար ի վեցն. եւ զանապականն՝ սկսաւ յեւթն: Զիմանալի աշխարհն ոչ առնելով այլ տեսանելով, զարդարէ զնա: Որք անցանկալի է նա, զոր միշտ առնէ զնա Աստուած երանելեացն բնակութիւն եւ հանգիստ, զի ի ժամանակի եղեալքն ժամանակաւ ապականին երկոքին: Իսկ իմանալին՝ անժամանակ, տեսեալն յԱրարչէն՝ ընդ Աստուծոյ անժամանակ էին՝ մնայ յաւիտեան: Յեղներորդումն դադարեցուցանէ ի գործոցն եւ այլ իմն սկսանի աստուածագնացոյնս զնախախմամութիւն յայտնէ, որ յետ առնելոց էր, որպէս ամենայն արուեստաւոր յետ կազմելոյն, խնամելոյ սկսանին": (Վեներտիկ 1859, "Մեկնութիւն Արարածոց", Մաշտոցի անուան մատենադարան, ձեռ. 1267): Եօթերորդ օրը լինելով Արարչի հանգստեան օր, նաեւ՝ աննիւթական աշխարհի ստեղծման օր է, անապական եւ անժամանակ է: Սրանով պայմանաւորուած եօթ թիւը գերբնական իրականութիւնների թուային դրսևորում է եւ արարչագործման խորհրդանշան: Եւթը խորհրդանշում է նաեւ արարչագործման աւարտը, քանզի

եւթը իր բնոյթով համերաշխ է միակին: Ինչպէս նշում է Փիլոն Ալեքսանդրացին(*) "Այլաբանութեան" մէջ. " . . . ի ներքս ի տասնեկի թիւք, կամ ծնանին կամ ծնանեն զ'իններքս տասնեկին՝ զնոյն: Իսկ եւթերեակն ոչ ծնանէ զոք զներսոյց տասնեկի թուոցն, եւ ոչ ծնանի յումեքէ: Ըստ որում ասելով զնա պիթագորեանքն մշտնջենաւորակուսին եւ անմաւրն՝ միակի նմանեցուցանեն, զի ոչ ծնաւ եւ ոչ ծնցի" (Փիլոնի Հեքրայեցոյ, "Ճառք", Վեներտիկ 1892, էջ 109):

Եօթը (7) նմանեցնում է մէկին (1), քանզի վերջինիս պէս նա էլ ոչ ծնուեց եւ ոչ էլ ծնում է: Իր հերթին մէկ (1) թիւը դիտուում է իրրեւ մշտնջենաւոր կոյս եւ անմայր: Համեմատելու համար Դաւիթ Անյաղթի մօտ կարդում ենք "Պարտ է գիտնալ, եթէ եւթն թիւդ կոյս լսի, որպէս Աթենայ եւ ժամանակ . . .": Անյաղթը թիւը կուսական է կոչում նմանացնելով Աթենասին(**) եւ ժամանակին: Եօթը (7) թիւի խորհրդարանական լայն մեկնութեան ենք հանդիպում Անանիա Նարեկացու "Սակս թուոց" աշխատութեան մէջ, ուր նա յենուելով պիթագորականների, Պլատոնի, Դաւիթ Անյաղթի, Փիլոն Ալեքսանդրացու տեսութիւնների վրայ գրում է. "Իսկ սքանչելի թիւ է-երորդին (7-երորդ-ծանօթ հեղինակի) յոգնաթիւ ունի խորհուրդ զանազանեալ անխառն տարրորոշ թիւ, սեռն եւ անապական բնութիւն, զի ոչ բնակի զոք, եւ ոչ ծնանի յումեքէ ի ներքոյ ժ-ինդ (10ինդ), զոր կոչեն մշտնջենակուսի եւ անմաւր, միակի ի բնութիւն, զոր ասեն ծնեալ յուղոյն Արամազդայ: Արդ, ունի սա թիւ զեւթն շնորհաց հոգւոյն՝ իմաստութեան, հաննարոյ եւ խորհրդոյ եւ զարութեան, գիտութեան եւ աստուածապաշտութեան եւ երկիրդի աստուծոյ: Եւ ի սմա Աստուած ոչ եթէ հանգչի, այլ

(*) Ալեքսանդրացի - կամ Հեքրայեցի

(**) Աթենաս - հին յունական գիտութիւնների, արուեստների, յաղթական պատե-

րազմների եւ խաղաղութեան չաստուածուի: Համարում էր ծնուած Զեւսի գլխից ու "Յաւերժ Կոյս" էր:

հանգուցանե՛լ զարարածս, զի տեղի առնու յարարչագործելոյ . . . եւ սովին թուով ի կարգ անկեալ վարի աշխարհ, զի շարաթք եւ ամիսք եւ տարիք սովաւ գոյացեալ երեւին մեզ: Նաեւ ի ծնունդս յարարագոյն է թիւս այս, զի յէ(7) աւուր սաղմն առեալ յարգանդի ծնանի որդին: Եւ է(7) ամսեայ ծնունդն բեղմնաւորք լինին եւ առողջք: Յէ(7) ամսեան ընծիւղին ատամունք: Եւ յէ(7) ամին փոփոխին, եւ ընծայի տեսութիւն մտացն եւ երեւութեան կերպարանք բանից յոգիսն: Վասն որոյ է(7) ամսայ հրամայեն առնուլ ի վարժս կրթութեան դպրոցաց: Եւ յիմաստութեան տան է(7) հաստատին սիւնք: Է(7) եւ մոլորակունք կարգեալ ի սպաս պաշտաման բուսոց եւ տնգոց. է(7) եւ ծակք զգայութեան՝ ր(2) աչաւք, ր(2) ականջաւք, ր(2) ծծոց քմաց եւ մի(1) քաշակեկեաց, որ ունի մուտ մահկանացուն եւ գել անմահին քանականի: Է(7) է եւ արտաթորումն՝ արտաւոր, տողուկք ծծոց, հոսումն քրտան, ծորումն որովայնի, առաւուշտ ջրոյ, հեղուկսն եւ սերմանն: Եւ լուսին յէ(7) ախտակցագոյն ունի առ երկիրս, եւ յԲ(2) է(7)նն ուռնացեալ վնու: Եւ միտք յէ ամի ծնանի գտեսութիւն քանի: Իսկ մարմինն յԲ(2) է(7) զծննդականն առնու բեղմունս . . . ("Սակս թուոց", էջ 245, մատենադարան, ձեռ. 499, թերթ 447ա): Անանիա Նարեկացին եօթ(7) թիւն տալիս է, թէ՛ հոգեւոր, կրօնական նշանակութիւն եւ թէ՛ ֆիզիքական: Այսպէս եօթ(7) թիւը Ս. Հոգու եօթը(7) շնորհների խորհրդանշն է, դրանք են՝ 1) իմաստութիւն, 2) հանճար, 3) խոհականութիւն, 4) զօրութիւն, 5) գիտութիւն, 6) աստուածապաշտութիւն 7) Աստուծոյ երկիրը: Միեւնոյն ժամանակ եօթ(7) թիւը նա տեսնում է նիւթական աշխարհի մէջ: Մարդու զգայարանների անցքերը ("ծակք") նոյնպէս եօթ(7) են՝ (2) աչքերի անցքեր, (2) ականջների անցքեր, (2) քթանցքներ, եւ ճաշակելիքի անցք՝ բերանը:

Անանիան խօսում է նաեւ մարդու արտաթորման, կամ խոնաւութեան եօթ(7) տեսակների մասին: Նա նկատում է, որ եօթերորդ(7) ամսում ծնուած երեխան առողջ պիտի լինի: Եօթ(7) ամսական հասակում աճում են ատամները: Եօթերորդ(7) տարում երեխայի մտային ընդունակութիւնները քաւական են, որպէսզի սկսի դպրոցում կրթուել: Անանիա Նարեկացին, մեկնելով թւերը, փաստում է, որ աշխարհը ստեղծուած է Աստուածային մի ուժով, միեւնոյն "նարտարապետի" կողմից: Նրա վերը յիշուած մտքերը, Փիլոնի, Դաւիթ Անյաղթի եօթ(7) թւի մեկնութեան նմանատիպ հատուածների վերաշարադրանքն է:

Եօթ(7) թւի խորհրդաբանական մեկնութեան ենք հանդիպում եւ Նդիշէի մատենագրութեան մէջ: Ուր նա մասնաւորապէս մեկնում է եւ Սամսոնի եօթնագիսակը, նշելով որ այն ցոյց է տալիս Ս. Հոգու յատկանիշները. եւ "Այս շնորհք եօթնեկի առ իւրաքանչիւր անձին տեսանի. եւ եթէ մի յայսցանէ պակաս իցէ յումեքէ, խեղ ասեն նմա եւ ոչ ողջանդամ. ապա թէ եօթնեքեան կտրիցին, մեռեալ է եւ ոչ կենդանի" (Նդիշէ, "Մատենագրութիւն նախնաց" Վենետիկ 1859 էջ 191):

Եօթը խորհրդանշում է նաեւ բացասական երեւոյթներ, սակայն դրանց կողմին միշտ առկայ է դրականը: Այսպէս՝ եօթ(7) եւ մահացու մեղքերը եւ եօթ(7) են "դեղերը" նրանց դէմ. - 1) հպարտութիւն - խոնարհութիւն, 2) նախանձ - եղբայրասիրութիւն, 3) քարկութիւն - հեզութիւն, 4) ծուլութիւն - փութաբանութիւն, եռանդ, 5) ագահութիւն - չափաւորութիւն, 6) որկրամոլութիւն - ժուժկալութիւն, 7) քղա-խոհութիւն - ողջախոհ սէր, բարեխառնութիւն: Մանդակունին իր "ճառերից" մեկում (էջ 189) նշում է եօթ(7) մոլութիւններ՝ պոռնկութիւն, դրամասիրութիւն, նախանձ, սուտ վկայութիւն, կաս-

կաժամտութիւն, փառասիրութիւն, հպարտութիւն:

Հին Կտակարանի մէջ **ԲՈՐԸ(7)** հիմնականում օժտուած է արարչական ունակութեամբ, իսկ Նոր Կտակարանի մէջ աւելի արտայայտուած է նրա փրկագործող կարողութիւնը: Վերջինիս հետ կապուած յիշատակելի է, որ Հայոց եկեղեցին ունի հաստատուած **ԲՈՐ(7)** խորհուրդներ: Այս **ԲՈՐ(7)** ամուր սիւներով Յիսուս Քրիստոս շարունակում է իր փրկագործութիւնը եւ կը շարունակի մինչեւ աշխարհի կատարածը: Ս. եկեղեցւոյ **ԲՈՐԸ(7)** խորհուրդներն են՝ մկրտութիւն, դրոշմ, ապաշխարութիւն, հաղորդութիւն, պսակ կամ ամուսնութիւն, ձեռնադրութիւն, կարգ հիւանդաց կամ վերջին օծում:

ԲՈՐԻ(7) արարչական ունակութիւնը եւ փրկագործող կարողութիւնը անշուշտ նաեւ կամրջուում է, ինչպէս օրինակ եղիշէի մեկնութեան մէջ, ուր Երիւնդի **ԲՈՐ** պարիսպների խորտակումը **ԲՈՐ** օր, **ԲՈՐ** քահանաներով, **ԲՈՐ** յորեկեան փողերով պատուելուց յետոյ նմանեցում է սեփական մեղքերից ձերբազատուելուն:

ԲՈՐԸ միեւնոյն ժամանակ գեղեցկութեան նշանակ է: Եղիշէի "Յերեւումն Տեառն առ տիրեբեայ ծովուն" ճառում կարդում ենք. "Թիւղ ձեր գեղեցիկ է, ահաւասիկ **ԲՈՐ**ն էք, ի ձեզ տեսանի աշխարհս, միանգամայն եւ Տէր աշխարհիս". եւ ինչպէս նշում է Յակոբ Քեռսեանը իր "Խորհրդանշանը եղիշէի մեկնաբանական եւ ճառագրական երկերում" յօդուածում. "Սա նշանակում է, որ **ԲՈՐ**ով (7ով) պայմանաւորուած աշխարհի գեղեցկութիւնը արտացոլումն է բացարձակ գեղեցկութեան: **ԲՈՐԸ(7)** Աստուածութեան յատկութիւններից մէկի՝ գերբնական գեղեցկութեան թուային արտայայտութիւնն է":

ԲՈՐ (7) թուի մեկնութիւնը գտնում ենք եւ քերականութեան մէջ եւ երաժշտութեան: Այսպէս Փիլոն հեբրայեցիին

գրում է. "Արդ ի քերականութեան՝ լաւագոյն տառիցն, եւ որք աւելի զարութիւնն ունին՝ եւթն(7) են թուով ձայնաւորք: Եւ ըստ երաժշտութեան, եւթնադի վնարն գրեթէ քան զամենայն գործիս լաւագոյն է, վասն զի ներ-յարմարագոյն նուագաւոր երգոցն սեռ, նագագոյն եւ հոչակաւոր": ("Փառք", Վենետիկ 1892, էջ 109): Աւելացնենք որ Մեսրոպեան այբուրենում "է" ձայնաւոր հնչիւնի թուային արժէքը **ԲՈՐ(7)** է:

ԲՈՐ(7) թուի ուշագրաւ խորհրդարանական մեկնութեան ենք հանդիպում նաեւ Գրիգոր Նարեկացու մօտ.

" . . . Իսկ միւսն զանհանդերձելի երկիր որովայնին սենեկի՝

ԲՈՐնեակ զաւակօք բարգաւանեցոյց.

Որ է թիւ մի անբաւութեան զքնան նշանակելոյ գէութիւն,

Աստուածութեանն յարակայութեան սահման անհետազօտելի.

Եւ աւագանին նորածին որդոց անհատ յորդութիւն:

Այս թիւ պանծալի, որում ոչ է կէտ կցորդի եւ ոչ սպառուած վախճանի,

Այլ կոյս ուն է ուրոյն ընտրութեամբ նուիրեալ յաւետ

Անճառ վիճակաւ համայն յաւիտենիւ, դժուարաբար գմանելի մերոց իմաստից"

("Մատեան", քան ԼԱ, Ա):

Այժմ ներկայացնենք Բարգմանաբար:

"Իսկ միւսն ամմշակ հողն՝ սենեակն իր որովայնի,

Բարգաւանեցրեց **ԲՈՐ** զաւակներով.

Որը մի թիւ է անբաւութեան, էութիւն նշանակող,

Աստուածութեանն մշտակայութեան սահման անհետազօտելի.

Եւ աւագանի նորածին որդիների անհատելի յորդութիւն:

Թիւն այս պանծալի է, որ իրեն

հաւասարագոյգ չունի, անվախճան թուերից է,

Այլ ումն կոյս է ուրոյն ընտրութեամբ յաւետ նուիրեալ,

Աննառնի ցոյց կը տայ համայն յաւիտեանականը

Դժուար ըմբռնելի մեր մտքին՝:

Ս. Գրիգոր Նարեկացու մօտ **Եօթ(7)** անբաւութիւն խորհրդանշող թիւ է, որ էութիւն է նշանակում: Այն՝ Աստուածութեան յարակալութեան, կամ մշտակալութեան անհետազօտելի սահմանն է: Պանծալի այդ թիւը իրեն հաւասարագոյգ չունի, անվախճան թիւ է: **Եօթը (7)** յաւետ նուիրեալ կոյս է, ուրոյն ընտրութեամբ: Աննառնին ցոյց է տալիս համայն, բովանդակ յաւիտեանականութիւնը: Եւ դժուարաբարգմանելի է, այսինքն՝ մեր ըմբռման համար յաւետ անիմանալի: Նոյն Նարեկի "**ՀԹ**" գլխում նորից հանդիպում ենք **Եօթ(7)** թւի մեկնութեանն. "Ահա վայ ինձ **Եօթ**իցս անգամ կրկին եղկութեամբ, ըստ չափոյ կշռութեան այսր համարոյ, Որ անբաւութիւն թուոց պարագրէ":

(Բան "**ՀԹ**", Դ)

Թարգմանաբար

"Ահա վայ ինձ **Եօթ** անգամ կրկին եղկութեամբ,

Ըստ այս համարանքի չափ ու կշռի, Որ թուերի անբաւութիւնն է պարագրում":

Ս. Գրիգորի Նարեկացին **Եօթ(7)** թիւը օժտում է անսահմանը բովանդակելու, պարունակելու յատկութեամբ:

Եօթ(7) թւին բաւական շատ ենք հանդիպում Աստուածաշունչի մէջ, այս առիթով որոշ օրինակներ է յիշատակում վարդան Այգեկցին իր "Բանք խրատականք" նառնից մէկում, որոնք գրուած են Հայոց Պապին իշխանի խնդրանքով: "Խրատ վասն տասն վանառականաց" աշխատութեան մէջ հեղինակը գրում է, որ **Եօթ(7)** էին Ադամի շնորհները, որոնք կորցրեց

յանցանքով: **Եօթ(7)** էին Կայէնի յանցանքները, **Եօթ** էին մահւ նրա պատիժները եւ Ադամից յետոյ **Եօթ**ներորդ՝ Ենոքը, երկինք բարձրացաւ կենդանի մարմնով, **Եօթ**ն էին աշտանակները եւ **Եօթ**ն էին նրագների բերանները, **Եօթ** օր էր փառութիւնը եւ **Եօթ** օր հանգիստը: Վկայակոչելով Եսայի մարգարէին Այգեկցին նշում է, թէ **Եօթ** են հոգու զօրութիւնները, որ մեզ համար ընդունեց ոչ մի բանի կարիք չունեցող Յիսուսը եւ շնորհեց մեզ: Հեղինակը մեկնում է, որ **Եօթ(7)** դար է աշխարհի կեանքը եւ այլեւս չի անի ու չի բազմանայ: Այս պատճառով խրատում է վարդապետը եւ ասում, որ մարմնիդ անհրաժեշտ պէտքերից աւելի մի ձգտիր կերակրի, ըմպելիքի, հանդերձի եւ արծաթի. մերձեցիր կնոջդ, բայց միայն որդեծնութեան համար, պարկեշտութեամբ ու արդար անկողինով: Ապա աւելացնում է նաեւ, որ չձգտենք թանկարժէք զգեստի, կերակրի, ինչը որ չհրամայեց Աստուած, այլ մեծ ջանքով մարդիկ չարագիտ արուեստով գտան: Այգեկցին զգուշացնում է, որ ցանկասէր աղտեղութեամբ չվարուենք, կանանց հետ լրբանալով շնութեամբ, քանզի վերջինս Աստուածային Սուրբ Կտակարանները նախատում են: Ապա վարդապետը պատուիրում է որպէս զի պարկեշտ լինենք եւ չմոռանանք **Եօթ**երորդ դարը, որը յաւիտեանական կեանքի մուտքն է ու **Եօթ**երորդ դարից յետոյ յարութիւն կը լինի եւ կը վերցնի ամէն ոք ըստ իր վաստակածի: Եւ կը դադարեն մարմնական խորհուրդներն ու աշխարհի գործերը: Կը վերանան մեղքն ու մահը: Աստուած կը հանգստանայ **Եօթ**երորդ դարի աւարտով, այլեւս նա չի տրտմի մեղքերի պատճառով, որովհետեւ աւարտուեցին այս աշխարհի գործերն ու սատանայի չարիքը՝ որն այժմ գործել է տալիս մարդկանց, այլեւս չի ստեղծի ու չի անեցնի:

Վարդան Այգեկցու այս մեկնութեամբ ու խրատներով աւարտեմք եօթ(7) թուի խորհրդարանութիւնը, անշուշտ չսպառնելով նիւթը, բայց այսֆանով սահմանափակուելով անցնեմք մէկ այլ թուի՝ տասն(10) խորհրդարանութեանը:

Տասը թիւը(10) մեկնիչների կողմից նկատուում էր որպէս կատարեալ թիւ, որն իր մէջ ծածուկ ամբարուած բազում խորհուրդներ ու Աստուածային իմաստներ ունի: Այն՝ գումարն է երեքի(3) եւ եօթի(7): Երեքը(3)՝ Ս. Երրորդութեան անձերն են եւ եօթը(7)՝ մարդն է: Եօթն(7) իր հերթին գումարն է երեքի(3) եւ չորսի(4), հոգու եւ մարմնի:

Դաւիթ Անյաղթի մօտ այս թուի մասին կարդում ենք. "Իսկ տասը թիւը կատարեալ է, որովհետեւ բոլոր միաւորները առանձին անւանումներով հանդէս են գալիս մինչեւ տասը, իսկ նրանից յետոյ համապատասխանաբար կրկնուում է", (Դաւիթ Անյաղթ, "Երկիր", Երեւան 1980, էջ 99): Ըստ Անանիա վարդապետի "2-երորդ(10) թիւը է կատարումն թուոց միակաց եւ ծնունդ Ե-եկին(5)": Իսկ Շիրակացու մատենագրութեան մէջ կատարման "Ժ"(10) թուին, որ է պատնառ կատարեալ եւ բարձրագոյն Աստուածութեանն", (Մաշտոցի անուան Մատենադարան, ձեռագիր համար 714, Բ. (68ա-79ա):

Այսպիսով տասը(10) ծնում է հինգի(5) կրկնապատումից, բոլորը միաւորները առանձին անուանումներով հանդէս են գալիս մինչեւ տասը(10), որից յետոյ համապատասխանաբար կրկնուում են: Տասը ծնում է նաեւ հետեւեալ ձեւով, երբ չորսին(4) գումարում են իրենց նախորդող թուերը՝ մէկը(1), երկուսը(2), երեքը(3): Այսպէս՝ $4+3=7$, $7+2=9$, $9+1=10$: Այս հանգամանքը նկատուում է Դաւիթ Անյաղթը ("Երկիր", էջ 99) եւ նշում, որ չորսը(4) մեծ յարգանք էր

վայելել պիւթագորականների մօտ, քանզի չորս(4) են տարրերը ու չորս(4) են հոգու առաքինութիւնները: Միւս երեք թուերը (Մէկ, երկու, երեք), նոյնպէս միասնիկ մեծ նշանակութիւն ունեն:

Իսկ միաւորներով (մէկ (1) թուերի գումար, հաւաքուած տասը նկատուում է որպէս Աստուծոյ խօսք, որ գոյացրեց աշխարհը:

Փիլոն Երրայեցին տասը(10) թուի մասին գրում է. "Եւ տասներեակն լուազոյն է քան զհնգեակն. քանզի սա է ամենակատար, լիագոյն եւ վերագոյն թիւ, առանձինն իւր իսկ աստուածային խորհրդոց . . . Վասն որոյ եւ տասներեակն սուրբ խոստովանէ Մովսէս՝ քննաւորապէս զհնգերեակն լինելութեան թողեալ եւ գտասներեակն՝ Աստուծոյ քանին . . ." ("Փիլոնի Երրայեցւոյ Մնացորդք ի Հայս", Վենետիկ 1826, էջ (330-331):

Տասը(10) թուի կատարելութիւնը կայանում է եւ նրանում, որ այն ունի արարչագործող ունակութիւն: Տասը(10) ոչ միայն աշխարհը մարմնաւորող կարողութիւն ունի այլ եւ աշխարհի կարգաւորիչ է: Աստուծոյ կողմից Մովսէսին (նրա միջոցով ժողովուրդին) օրէնքը տրուեց տասը(10) պատուիրաններով (տասնաբանեան), ուստի տասը(10) նաեւ մարդկային յարաբերութիւնների կարգաւորիչ է: Վարդան Այգեկցին "Խրատք վասն տասն վանառականաց" գործի մէջ գրում է, որ տասը(10) աւարտն է թուերի եւ նրանց գլխաւորն ու թագաւորն է, սա ցոյց է տալիս Աստուածութիւնը՝ բոլոր տէրութեան թագաւորն ու գլուխը, բազմած է անձնականերս աթոռին, աւելի վեր քան երկինքների երկինքը, ինքն դասերի գագաթին, անհամար երկնաւոր անմարմին գուարթութիւնների զօրքերի անմատոյց լոյսում ու անմերձեանալի խորանում որն անտես է արարածներին, բոլորի Արարիչ Սուրբ եւ համագոյ Երրորդութիւնն անբա-

Ժամկետի:

Այգեկցիին յիշեցնում է նաև, որ տասը(10) թիւը ցոյց է տալիս Ադամից յետոյ տասներորդին՝ Նոյին, նա երկրորդ հայրն է աշխարհի: Վարդան Այգեկցիին տասը(10) թուի հետ կապուած նշում է՝ Աբրահամի տասը(10) փորձանքները, եգիպտոսի տասը(10) հարուածները, տասը(10) պատուիրանները, եւայլն: Իսկ վերջում քացայայտում է տասերի(10) անվախճան խորհրդի մեծութիւնը, սսել որ երբ տասը(10) տասուվ(10) քազմապատկես կը ստանաս հարիւր կատարեալ թիւը, ապա եթէ հարիւրը(100) քազմապատկես տասուվ(10)՝ կը ստանաս

հազար(1000), եթէ հազարը(1000) քազմապատկես կը լինի տասը հազար (թիւր մի), այնուհետեւ կ'անհետանայ ու անհաշիւ կը քարձրանայ հազարը հազարների վրայ եւ թիւը թիւերի: Այլեւս այս լաւագոյն խորհուրդն է ցոյց տալիս, որովհետեւ քացայայտում է անթիւ եւ անեզր քազմութիւնը հոգեղէն ու հոդեղէն, հրեղէն ու լուսեղէն օրհնաբողներին Աստուծոյ ըստ մեծին Դանիէլի, որն ասում է. "Երբ կը դիտէի, աթոռներ դրուեցին ու հիմաւորեցը մստեց . . .: Հազարաւորներ ծառայութիւն կ'անէին նրան եւ թիւաւորներ նրա առջեւ կը կանգնէին": (Դանիէլ, գլուխ "է", համար 9-10:)

ՍԱՐԳԻՍ ՍԱՐԻԲԷԿԵԱՆ

(Շարունակելի)